

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարությը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարություն: Պատասխանների ճնարությի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

1 Ի՞նչն է բնորոշ երկաքիլավոր քույսերի մեծամասնությանը.

- 1) ցողունում կամքիումի շերտի առկայությունը
- 2) տերևների աղեղնաջիղ ջղավորությունը
- 3) սերմնամաշկի դժվար անջատումը
- 4) էնդոսպերմում պաշարանյութերի կուտակումը

2 Ո՞ր սնկերին է պատկանում մուկորը.

- 1) գլխարկավոր սնկերին
- 2) բորբոսասնկերին
- 3) խմորասնկերին
- 4) մակաբույծ սնկերին

3 Որո՞նք են բարձրակարգ սպորավոր քույսեր.

- 1) մերկասերմերը
- 2) ջրիմուռները
- 3) ձիաձետերը
- 4) ծածկասերմերը

4 Ո՞ր որդն է պատկանում օղակավոր որդերի տիպին.

- 1) ասկարիդը
- 2) եզան երիզորդը
- 3) սպիտակ պլանարիան
- 4) ներեխը

5 Զկան գլխուղեղի ո՞ր քաժնից են դուրս գալիս տեսողական նյարդերը.

- 1) միջակա ուղեղից
- 2) առջևի ուղեղից
- 3) ուղեղիկից
- 4) երկարավուն ուղեղից

6 Թվարկված կենդանիներից որի՞ ճվարջիջը հարուստ չէ դեղնուցով.

- 1) մողեսի
- 2) շան
- 3) աղավնու
- 4) բաղակտուցի

7 Ո՞ր գործընթացն է մարդու սիմպաթիկ նյարդային համակարգի դրդման արդյունք.

- 1) անոթազարկի դանդաղում
- 2) ստամոքսահյութի արտադրման ճնշում
- 3) աղբենալինի արտադրման ճնշում
- 4) բիբերի նեղացում

8 Մարդու մեծ կիսագնդերի կեղևի ո՞ր բլթերն է քաժանում կենտրոնական ակոսը.

- 1) քունքային և գագաթային
- 2) ճակատային և քունքային
- 3) ճակատային և գագաթային
- 4) գագաթային և ծոծրակային

9 Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում արյան մեջ աղբենալինի քանակի ավելացման դեպքում.

- 1) արագանում է սրտի աշխատանքը, բարձրանում է արյան ճնշումը
- 2) արյան մեջ նվազում է գլյուկոզի քանակությունը
- 3) լայնանում են արյունատար անորոշերը, սինթեզվում է մեծ քանակությամբ գլիկոզեն
- 4) սրտի աշխատանքը դանդաղում է, գլյուկոզի քանակն արյան մեջ՝ նվազում

10 Մարդու ո՞ր անոքներով է հոսում երակային արյուն.

- 1) թոքային երակներով և դրներակով
- 2) նեֆրոնի պատիճի առքերող և արտատար անոքներով
- 3) թոքային զարկերակներով և սիներակներով
- 4) թոքային զարկերակներով և երիկամներ մտնող անոքներով

11 Ինչի՞ն են նպաստում մարդու քթի խոռոչի լորձաթաղանթի արյունատար անոքները.

- 1) ներշնչվող օդի տաքացմանը
- 2) արտաշնչվող օդից հոտավետ նյութերի կլանմանը
- 3) ներշնչվող օդի խոնավացմանը և մաքրմանը
- 4) ներշնչվող օդի խոնավացմանը

12

Ինչի՞ է հանգեցնում մարդու օրգանիզմում քրտնարտադրության ուժեղացումը և մաշկի արյան անոթների լայնացումը.

- 1) մարմնի ջերմաստիճանի բարձրացմանը
- 2) արյան ճնշման բարձրացմանը
- 3) արյան հոսքի արագացմանը
- 4) օրգանիզմի պաշտպանմանը գերտաքացումից

13

Ի՞նչ միացություն չի պարունակում մարդու քուքը.

- 1) մալթագ
- 2) պտիալին (ամիլագ)
- 3) պեպսին
- 4) լիզոնցին

14

Ո՞ր մարդու վերին վերջույթի կմախքի ոսկոր չէ.

- 1) բազկոսկրը
- 2) թիակոսկրը
- 3) անրակոսկրը
- 4) կրծոսկրը

15

Ո՞ր տիպի իմունիտետն է ձևավորվում մարդու օրգանիզմում քուժիչ շիճուկ ներարկելիս.

- 1) բնական ձեռքբերովի
- 2) բնական բնածին
- 3) արհեստական ակտիվ
- 4) արհեստական պասիվ

16

Ո՞ր պնդումն է ճիշտ վիտամին B₁-ի վերաբերյալ.

- 1) ավիտամինոզի դեպքում զարգանում է բերի-բերի հիվանդությունը, ջրալույծ է
- 2) թերվիտամինոզի կամ ավիտամինոզի դեպքում զարգանում են մաշկի և լորձաթաղանթների խոցեր, ճարպալույծ է
- 3) ջրալույծ է, ավիտամինոզի դեպքում զարգանում է չարորակ սակավարյունություն
- 4) հանդիսանում է էներգիայի աղբյուր, թերվիտամինոզի դեպքում խթանվում է ողողոսպինի սինթեզը

17

Բջջում որտե՞ղ է կատարվում ռիբոսոմների մեծ և փոքր մասնիկների (ենթամիավորների) ձևավորումը.

- 1) կորիզակում
- 2) միտոքոնդրիումներում, քլորոպլաստներում և վակուոլներում
- 3) բջջակենտրոնում
- 4) Գոլցիի ապարատում և էնդոպլազմային ցանցում

18

Որտե՞ղ են ձևավորվում լիզոսոմները.

- 1) միտոքոնդրիումներում
- 2) Գոլցիի ապարատում
- 3) պլազմային թաղանթի վրա
- 4) ռիբոսոմներում

19

Ո՞ր ածխացուրն է պատկանում մոնոսախարիդներին.

- 1) գլյուկոզը
- 2) գլիկոզենը
- 3) թաղանթանյութը
- 4) խիտինը

20

Ինչո՞վ են միտոքոնդրիումները և քլորոպլաստները տարրերվում կորիզից.

- 1) ունեն արտաքին և ներքին թաղանթներ
- 2) նրանցում տեղի է ունենում ԱԵՖ-ի սինթեզ
- 3) պարունակում են ՌՆԹ-
- 4) պարունակում են ԴՆԹ-

21

Էռոկարիոտ բջջում որտե՞ղ է տեղի ունենում տրանսկրիպցիայի գործընթացը.

- 1) ռիբոսոմներում
- 2) հարթ էնդոպլազմային ցանցում
- 3) հատիկավոր էնդոպլազմային ցանցում
- 4) բջջակորիզում

22

Ո՞ր պրոցեսն է տեղի ունենում ինտերֆազի G₂ փուլում.

- 1) ԴՆԹ-ի կրկնապատկումը
- 2) հոմոլոգ քրոմոսոմների տրամախաչումը
- 3) ցիտոկինեզը
- 4) բջջային կենտրոնի ցենտրիոլների կրկնապատկումը

23 Ինչպե՞ս է կոչվում առանց բեղմնավորման սաղմի և սերմի զարգացումը բույսերում.

- 1) անսեռ բազմացում
- 2) ապոմիքսիս
- 3) հետսաղմնային զարգացում
- 4) վեգետատիվ բազմացում

24 Ո՞րն է միտոզի և մեյոզի նմանությունը.

- 1) մեյոզի առաջին բաժանման անաֆազում բջջի բևեռներ են տեղափոխվում հոմոլոգ երկրումատիդային քրոմոսոմները՝ ինչպես միտոզի անաֆազում
- 2) երկու բաժանումների արդյունքում էլ առաջանում են նույն թվով և քրոմոսոմային հավաքակազմով հավասար բջիջներ
- 3) երկու բաժանումների դեպքում էլ տեղի են ունենում կոնյուգացիա և կրոսինգօվեր
- 4) մեյոզի երկրորդ բաժանման անաֆազում բջջի բևեռներ են տեղափոխվում քրոմատիդները՝ ինչպես միտոզի անաֆազում

25 Ի՞նչ է գենոտիպը.

- 1) սեռական քրոմոսոմներում գտնվող գեների ամբողջությունը
- 2) մեկ քրոմոսոմում գտնվող գեների ամբողջությունը
- 3) X քրոմոսոմում գտնվող գեների ամբողջությունը
- 4) օրգանիզմի բոլոր գեների ամբողջությունը

26 Ինչպիսի՞ ֆենոտիպ կստացվի կանաչ սերմերով ոլորի ինքնափոշոտման արդյունքում.

- 1) 25 % կանաչ և 75% դեղին սերմերով
- 2) 75 % կանաչ և 25% դեղին սերմերով
- 3) 100% կանաչ սերմերով
- 4) 50 % կանաչ և 50% դեղին սերմերով

27 Ի՞նչ հարաբերություն է ստացվում հետերօղիզոտ առանձնյակների միահիբրիդ խաչասերման արդյունքում՝ ոչ լրիվ դոմինանտության դեպքում.

- 1) 3:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
- 2) 1:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի և գենոտիպի
- 3) 1:2:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի և գենոտիպի
- 4) 3:1 ճեղքավորում՝ ըստ գենոտիպի

28

Ո՞ր կենդանիներին է բնորոշ արական հետերոգամետությունը.

- 1) սողուններին
- 2) կաթնասուններին
- 3) պոչավոր երկկենցաղներին
- 4) թռչուններին

29

Մարդու ո՞ր հիվանդության պատճառն է առևտոսումներում գտնվող մուտանտ ռեցեսիվ գենը.

- 1) Մարֆանի սինդրոմի
- 2) պոլիդակտիլիայի
- 3) Քլայնֆելտերի սինդրոմի
- 4) ալբինիզմի

30

Ինչպե՞ս են անվանում այն փոփոխությունները, որոնք չեն ժառանգվում և օնտոգենեզի ընթացքում ձեռք են բերվում որպես հարմարանքներ.

- 1) մուտացիոն
- 2) մոդիֆիկացիոն
- 3) համակցական
- 4) անորոշ

31

Էկոլոգիական գործոններից ո՞րն է կենսածին.

- 1) քամու արագությունը
- 2) ջրի քիմիական կազմությունը
- 3) միջատներով բույսերի փոշոտումը
- 4) օրվա տևողությունը

32

Տեսակների միջև գործող ո՞ր փոխհարաբերությունն է օգտակար միայն մեկ տեսակի համար.

- 1) կոմենսալիզմը
- 2) մուտուալիզմը
- 3) ամենսալիզմը
- 4) կոռպերացիան

33

Ի՞նչն է բնորոշ ազդուկոհամակարգերին.

- 1) լրացուցիչ էներգիայի կարիք չունեն
- 2) խախտված է բնական հավասարակշռությունը
- 3) դոմինանտ տեսակմերը բնական ընտրության արդյունք են
- 4) օժտված են ինքնակարգավորմամբ

34

Ո՞րն է էկոհամակարգերի երկրորդային արտադրանքը.

- 1) ռեղուցենտրոնի և պրոդուցենտրոնի կենսագանգվածի ավելացման արագությունը
- 2) կրնակումնենտների կենսագանգվածի ավելացման արագությունը
- 3) էկոհամակարգը կազմող բոլոր կենդանի օրգանիզմների գումարային զանգվածը
- 4) պրոդուցենտրոնի կենսագանգվածի աճը միավոր ժամանակում

35

Առանձնյակներին մեկ պոպուլյացիայի մեջ միավորող գործոններից ո՞րն է գլխավորը.

- 1) ժամանակի ընթացքում առանձնյակների միմյանց նմանվելը
- 2) ազատ խաչասերման հնարավորությունը
- 3) ընդհանուր թշնամիների առկայությունը
- 4) սեռահասուն և ոչ սեռահասուն առանձնյակների փոխհարաբերությունները

36

Ո՞րն է արոմորֆոզ.

- 1) հովանավորող գունավորումը
- 2) ֆոտոսինթեզը
- 3) միմիկրիան
- 4) նախազգուշացնող գունավորումը

(37-38) Ծագանակագույն աչքերով աջիկ տղամարդու և երկնագույն աչքերով ձախիկ կնոց ամուսնությունից ծնվեց մոր ֆենոտիպով երեխա: Ծագանակագույն աչքերը և աջիկությունը պայմանավորող գեները դոմինանտում են համապատասխանաբար երկնագույն աչքերի և ձախիկության գեների նկատմամբ և ժառանգվում են որպես առոտոսոնային շղթայակցված հատկանիշներ:

37

Որքա՞ն է շագանակագույն աչքերով աջիկ երեխա ծնվելու հավանականությունն այդ ընտանիքում.

- 1) 1/16
- 2) 1/8
- 3) 1/2
- 4) 1/4

38

Ինչպիսի՞ հնարավոր գենոտիպ ունի տղամարդը.

- 1) AaBB
- 2) AaBb
- 3) Aabb
- 4) AABb

(39-40) Արտի բոլորաշրջանը տևում է 0,8 վայրկյան: Առողջ մարդու հարաբերական հանգստի վիճակում գտնվող սրտի փորոքների կծկման տևողությունը 120 վայրկյան է:

39

Որքա՞ն է սրտի աշխատանքի տևողությունն (վրկ) այդ ընթացքում.

- 1) 120
- 2) 40
- 3) 200
- 4) 320

40

Քանի՞ վայրկյան է նախասրտերի քուլացումն այդ ընթացքում.

- 1) 280
- 2) 120
- 3) 200
- 4) 40

41

Մարդու օրգանիզմի կառուցվածքի ո՞ր առանձնահատկությանը (նշված է ձախ սյունակում) և էվոլյուցիայի ո՞ր ապացույցն է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կառուցվածքի առանձնահատկություն

Ապացույց

- A. դեմքի խիտ մազածածկույթ
- B. լրացուցիչ պտուկներ
- C. երրորդ կոպի մնացորդ
- D. մաշկային մկաններ
- E. պոչի առկայություն
- F. կույր աղիքի որդանման ելուստ
- G. պոչուկ

- 1. ռուդիմենտ
- 2. ատավիզմ

42

Գտնել միջատի բերանային ապարատի տիպի (նշված է աջ սյունակում) և հասուն միջատի (նշված է ձախ սյունակում) համապատասխանությունը: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Հասուն միջատ

Բերանային ապարատի տիպ

- A. փայտողիլ
- B. քիթեռ
- C. խավարասեր
- D. մոծակ
- E. ծղրիդ
- F. ճպուռ
- G. մեղու

- 1. ծակող-ծծող
- 2. ծծող
- 3. կրծող
- 4. կրծող-ծծող

43

Մարդու մեզի ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) ո՞ր առանձնահատկությունն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություն

Մեզի տեսակ

- | | |
|-------------------------------------------------|----------------|
| A. հոսում է հավաքող խողովակով | 1. առաջնային |
| B. բաղադրությամբ մոտ է արյան պլազմային | 2. երկրորդային |
| C. լցնում է երիկամի ավագանը | |
| D. առաջանում է հետադարձ ներծծման
արդյունքում | |
| E. լցնում է նեֆրոնի պատիճը | |
| F. առաջանում է ֆիլտրման եղանակով | |
| G. օրվա ընթացքում առաջանում է 150-170 լ | |

44

Ի՞նչ համապատասխանություն կա սաղմնային թերթիկի (նշված է աջ սյունակում) և նրանից զարգացող հյուսվածքի, օրգանի (նշված է ձախ սյունակում) միջև: Նշել միշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Հյուսվածք, օրգան

Սաղմնային թերթիկ

- | | |
|-----------------------|-------------|
| A. ատամների էմալ | 1. մեզոդերմ |
| B. մկանային հյուսվածք | 2. էնտոդերմ |
| C. աղիքի էպիթել | 3. էկտոդերմ |
| D. նյարդային համակարգ | |
| E. խոիկների էպիթել | |
| F. թոքերի էպիթել | |
| G. ոսկրային հյուսվածք | |
| H. մաշկի էպիթել | |

45

Փոփոխականության ո՞ր ձևին (նշված է աջ սյունակում) ո՞ր օրինակն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրինակ

Փոփոխականության ձև

- | | |
|------------------------------------------------------------------|---------------------------------|
| A. Քիզիկական մեծ բեռնվածությունների ժամանակ մկանների զանգվածի աճ | 1. Ֆենոտիպային փոփոխականություն |
| B. Առկլեռտիղների մեկ գույքի փոխարինում | 2. գենային մուտացիա |
| C. հապլոիդիա | 3. գենոմային մուտացիա |
| D. պոլիպետիդային շղթայի ամինաքրվի փոխարինում | 4. համակցական փոփոխականություն |
| E. բեղմնավորման ժամանակ զամետների պատահական զուգակցում | |
| F. աշնանը տերևների գույնի փոփոխություն | |
| G. տրիսոմիա | |

46

Նշել գորտի օրգանիզմ օղի անցման և հեռացման միջև ընկած ժամանակահատվածում իրականացվող գործընթացների ճիշտ հաջորդականությունը.

1. բերանակլանային խոռոչի հատակը բարձրանում է
2. բերանակլանային խոռոչի հատակն իջնում է
3. օղը թոքերից դուրս է զալիս մարմնի պատերի և ներքին օրգանների մկանների կծկման շնորհիվ
4. օղը քթանցքերով անցնում է բերանակլանային խոռոչ
5. օղը մղվում է դեպի թոքերը
6. բերանակլանային խոռոչում ստեղծվում է նոսրացած տարածություն
7. փակվում են քթանցքերի փականները

47

Նշել պայմանական ռեֆլեքսի ձևակորման փուլերի ճիշտ հաջորդականությունը:

1. պայմանական ռեֆլեքսի դրսևորում
2. անտարբեր գրգռիչի վերածում պայմանական գրգռիչի
3. ամրապնդում
4. ժամանակավոր կապի առաջացում
5. ոչ պայմանական ռեֆլեքսի գրգռիչի և անտարբեր գրգռիչի զուգակցում

48

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում գործընթացները մարդու տեսողական վերլուծիչի գործառույթի իրականացման ժամանակ:

1. լույսի ճառագայթների անցում եղջերաթաղանթով
2. տեսողական զգայության ձևավորում
3. ցանցաթաղանթի ընկալչական բջիջների գրգռում
4. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսագնդերի կեղև
5. լույսի ճառագայթների բեկում ակնաբյուրեղով անցնելիս
6. լույսի ճառագայթների անցում աչքի խցիկների հեղուկով
7. լույսի ճառագայթների արտացոլում առարկայի մակերևույթից

49

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում արյան մակարդման գործընթացները մարդու օրգանիզմում:

1. թրոմբոցիտների հպում արյունատար անոթի անհարթ մակերևույթին
2. արյան պլազմայի մեջ թրոմբինի արտազատում
3. արյունատար անոթի պատի վնասում
4. թրոմբի առաջացում
5. ֆիբրինոգենի բնափոխում
6. թրոմբոցիտների քայլայում
7. ֆիբրինի առաջացում

50

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները ծաղկավոր բույսերի սեռական բազմացման ժամանակ:

1. գեներատիվ և վեգետատիվ բջիջների առաջացում
2. փոշոտում
3. փոշեխողվակի առաջացում
4. սերմի առաջացում
5. սպերմիումի և ձվարջի միաձուլում
6. միկրոսպորի առաջացում
7. փոշեխողվակի ներթափանցում սաղմնապարկ

51

Նշել սերմնարանում գամետների առաջացման ժամանակ պրոցեսների ճիշտ հաջորդականությունը:

1. երկու հապլոիդ բջիջների առաջացում
2. սպերմատոզիդների ձևավորում
3. տրամախաչում
4. հոմոլոգ քրոմոսոմների տարամիտում
5. առաջին կարգի սպերմատոցիտների առաջացում
6. դիպլոիդ բջիջների բաժանում՝ դիպլոիդ բջիջների առաջացմամբ

52

Նշել կենդանական օրգանիզմում սպիտակուցի մոլեկուլի առաջացման ժամանակ պրոցեսների ճիշտ հաջորդականությունը.

1. ջրածնային կապերի քայլայում
2. հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S- կովալենտ կապերի առաջացում
3. սպիտակուցների ներմուծում օրգանիզմ
4. պեպտիդային կապերի առաջացում
5. հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S- կովալենտ կապերի քայլայում
6. ջրածնային կապերի առաջացում
7. ամինաթրուների ներմուծում բջիջ
8. պեպտիդային կապերի քայլայում
9. սպիտակուցի տարածական կառուցվածքի խախտում

53

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. հողաքափիկ ինֆուզորիան բազմանում է անսեռ եղանակով, որի ժամանակ տեղի է ունենում կոնյուգացիա
2. հողաքափիկ ինֆուզորիայի բազմացման ընթացքում կարևոր դեր է կատարում փոքր կորիզը
3. մակարույժ ինֆուզորիաներից է բալանտիդիումը
4. հողաքափիկ ինֆուզորիան շարժվում է կեղծ ուղերի միջոցով
5. հողաքափիկ ինֆուզորիայի բջջաբերանին հաջորդում է բջջակլանը
6. սննդի չմարաված մնացորդները հողաքափիկ ինֆուզորիայի մարմնից դուրս են գալիս արտազատող անցքով

54

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր ճիշտ պնդումները.

1. բարակ աղիները բաժանվում են երեք մասի՝ տասներկումատնյա աղի, զստաղի և խթաղի
2. ենթաստամոքսային գեղձի գլյուկազոն հորմոնն արյան մեջ գլյուկոզի հավելյալ քանակը դարձնում է գլիկոզեն
3. ստամոքսում տարբերում են օղակաղիք, երկայնակի, թեք մկաններ
4. աղաթթուն և աղիքահյութը ստեղծում են թթվային միջավայր, որն ակտիվացնում է աղիներում գործող մարսողական ֆերմենտները
5. հաստ աղու մանրէների ազդեցության տակ մարսվում են դեռևս չմարսված բուսական, մասամբ նաև կենդանական ծագում ունեցող ճարպերն ու բարդ ածխաջրերը
6. կլլման ընթացքում մարսողական ուղու մուտքը փակվում է մակուկորդով
7. ըմպանը մկանային օրգան է, որի պատերին գտնվում են լսողական փողերի անցքերը, որոնք կապում են ըմպանը միջին ականջի խոռոչի հետ

55

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. բակտերիաների բջջապատը կազմված է սպիտակուցներից և ածխաջրերից, հանդիպում են նաև լիպիդներ
2. կապտականաչ ջրիմուռները բազմանում են երկու մասի կիսվելով
3. բակտերիաների Դ-ՆԹ-ն սպիտակուցների մոլեկուլների հետ համալիրներ է առաջացնում
4. նիտրիֆիկացնող բակտերիաների մի խումբն օգտագործում է ազոտային թթուն ազոտական թթվի օքսիդացնելու ժամանակ անջատվող էներգիան
5. կապտականաչ ջրիմուռները որպես ջրածնի աղբյուր օգտագործում են ջուրը, այդ պատճառով դրանց ֆոտոսինթեզն ուղեկցվում է թթվածնի կլանումով
6. բակտերիաներում ֆոտոսինթետիկ գունակները հաճախ կապված են լինում պլազմային քաղանթին
7. կապտականաչ ջրիմուռներն ունեն քլորոფլաստներ, և ֆոտոսինթեզի ընթացքում ջրի մոլեկուլներն ենթարկվում են ֆոտոլիզի

56

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. սրբուկրի ողերը ձևավորում են կիսաշարժուն միացումներ
2. ձկնամկանը տեղակայված է բազկային հողի վերևում
3. սեղանաձև մկանը կծկվում է թիակներն իրար մոտեցնելիս և գլուխը դեպի հետ թեքելիս
4. կրծքավանդակի ուլուկը միացած են միմյանց շարժուն, կիսաշարժուն միացումներով
5. գոտկային և սրբանային ողերի սերտաճումը նպաստում է հենարանային գործառույթի իրականացմանը
6. ողնաշարի կրծքային բաժնի ողի ելուստները դուրս են գալիս աղեղից

57

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. կատուների մարմնի գունավորումը X քրոմոսոմին շղթայակցված հատկանիշ է
2. համաձայն Թ.Մորգանի օրենքի՝ պտղաճանճի երկինականությունը էզի և ռեցեսիվ հատկանիշներով արուի խաչասերման արդյունքում սերնդում ստացվում է չորս ֆենոտիպ՝ յուրաքանչյուրից 25 %
3. երկինականությունը առանձնական խաչասերման արդյունքում, գույզ ալելների ոչ լրիվ դոմինանտուրյան և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում դիտվում է գենոտիպային և ֆենոտիպային խմբերի հավասար քանակ
4. Մենդելի առաջին օրենքը գեների անկախ բաշխման օրենքն է
5. Aabb գենոտիպով առանձնական երրորդ կառաջացնեն 2 տիպի գամետներ
6. ծղրիդի, սենյակային ճանճի, աղավնու, փայտողիլի արուների սոմատիկ բջիջներն ունեն մեկ սեռական քրոմոսոմ

58

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. լրված դաշտի տարածքում լայնատերև անտառի վերականգնումը հանդիսանում է առաջնային սուկցեսիայի օրինակ
2. կենսածին նյութն իր մեջ ներառում է օվկիանոսի ջրերը, հողը, կրային ապարները, քարածուխը
3. ալոպատրիկ տեսակառաջացումը նոր տեսակի ծագումն է նախկին արեալի ներսում
4. սարացենիան զիշատիչ բույս է
5. կենսացենոզով գրաղեցված տարածքն իրեն բնորոշ պայմանների և գործոնների հետ միասին կոչվում է բիոտոպ
6. կոնսումենտներին բնորոշ է սնուցման հետերոտրոֆ եղանակը

- (59-60) Զերմահաղորդմամբ մաշկի միջոցով հեռանում է զերմության մինչև 15%-ը, իսկ գոլորշիացումով՝ զերմության 20%-ը: Մարմնի մակերեսը 2 մ² է, որից գոլորշիացել է 400 գրամ քրտինք:

59

Քանի՞ Չոռվ էներգիա է հեռացել մաշկի 1 մմ² մակերևույթից քրտինքի գոլորշիացման հետևանքով, եթե 1 գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՋ էներգիա:

60

Քանի՞ կՋ էներգիա է հեռացել օրգանիզմից զերմահաղորդմամբ:

(61-62) ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածում Ա/Գ քանակական հարաբերությունը հավասար է 2,1-ի:

61

Քանի՞ նուկլեոտիդներից է կազմված տվյալ հատվածը, եթե դրանում գուանինային մնացորդների քանակը հավասար է 2400-ի:

62

Քանի՞ ամինաթթվից կազմված սպիտակուց է կողավորում ԴՆԹ-ի այդ հատվածը:

(63-64) Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացել է 36 մոլ CO_2 և 270 մոլ H_2O :
1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաքրու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200
կՋոուլ, իսկ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա:

63

Քանի՞ կՋոուլ է կազմել էներգիայի կորուստը անթրվածին փուլում:

64

Քանի՞ կՋոուլ է կազմել էներգիայի կորուստը բթվածնային փուլում:

(65-66) Ֆուտոսինթեզի պրոցեսում կլանվել է 88 կգ CO₂: 1 մոլ զազր գրաղեցնում է 22,4 լիտր ծավալ:

65

Զանի՞ լիտր բթվածին է արտադրվել այդ ընթացքում:

66

Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (կգ):

67

Տարվա ընթացքում արեգակնային ճառագայթման էներգիայի հոսքը մարզագետին կազմել է $8 \cdot 10^{10}$ կՋ/հա: Մեկ հեկտար մարզագետնի վրա մեկ տարվա ընթացքում աճում է 20000 կգ խոտ: Առաջնային արտադրանքի յուրաքանչյուր 1 գ-ում կուտակվում է մոտ 30 կՋ: Արեգակնային էներգիայի քանի^o տոկոսն է յուրացնում մարզագետինք: Պատասխանը բազմապատկել 100-ով:

68

Քանի^o լիտր թթվածին է յուրացվել մարդու օրգանիզմում 8 ժամ տևողությամբ աշխատանքի ընթացքում, եթե աշխատանք կատարելիս մարդու շնչառական շարժումներն արագանում են 1,5 անգամ, շնչառական ծավալն աճում է 1,6 անգամ, իսկ յուրացվող թթվածնի ծավալն ավելանում է 25 %-ով: Ընդունել, որ մարդը հարաբերական հանգստի վիճակում արթուն ժամանակ 1 րոպեում կատարում է 20 շնչառական շարժում:

69

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. այն երևոյթը, երբ բջջում մեկ վիրուսի առկայությունը հաճախ պաշտպանում է բջիջը այլ վիրուսի մերժականցումից, կոչվում է ինտերֆերենցիա
2. աղիքային ցուպիկի T4 բակտերիաֆազի մարմինը կազմված է ΗՆԹ-ի մեկ մոլեկուլ պարունակող գլխիկից, պոչիկից և մի քանի պոչային ելուններից
3. ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսը նման է սնամեջ գլանի, որի պատր կազմված է սպիտակուցի մոլեկուլներից, իսկ ներսում տեղափորված է ΗՆԹ-ի մեկ մոլեկուլ
4. ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսի մասնիկը գնդիկային տեսքով կառուց է, իսկ ծխախոտի նեկրոզի վիրուսը ծողածն է
5. ֆագերն այնպիսի վիրուսներ են, որոնք բնակվում և բազմանում են բույսերի բջիջներում
6. հեպատիտը, անգինան, սիֆիլիսը, թոքախտը, սիբիրախտը, Էնցեֆալիտը վիրուսային հիվանդություններ են

70

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. շնչառական ծավալն օդի այն ծավալն է, որը բոքեր է անցնում մեկ հանգիստ ներշնչման ժամանակ
2. աջ թոքը կազմված է երեք բլթերից, ձախը՝ երկու
3. օդի առավելագույն քանակը, որը կարելի է արտաշնչել ամենախորը ներշնչումից հետո, կոչվում է թոքերի կենսական տարրողություն
4. թոքամզի թոքային թաղանթը պատում է կրծքավանդակի պատերը ներսից
5. կրծքավանդակի խոռոչի ծավալը մեծանում է, երբ մթնոլորտային օդը թափանցում է թոքեր
6. թոքերը պատված են հարք մկանային հյուսվածքի երկշերտ թաղանթով, որոնք նպաստում են թոքերի կծկմանը և ընդարձակմանը